Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով հրատապ բաց մրցույթով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Սյունիքի ՏՄՏ Մեղրու մաքսակետ տանող ճանապարհի արտաքին լուսավորության շինարարական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20 հուլիսի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Նորիկ Մնոյանը, անդամներ՝ Ալեկսանդր Կանդանովը, Համլետ Մակարյանը, Դավիթ Շատվերյանը, Արթուր Եղիազարյանը և քարտուղար՝ Վարդան Նավասարդյանը:

Օրակարգ

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Նորիկ Մնոյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը		Նախահաշվային գին
	«Մլեմ Շին» ՍՊԸ ՀՀ ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 60 շենք, բնակարան 40		
	Գնային առաջարկը, ՀՀ դրամ		
	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ	
1	132 000 000	158 400 000	159 757 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Մլեմ Շին» ՍՊԸ**-ին՝

  - ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀԿԱ-ՊԵԿ-

ՀԲՄԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Նորիկ Մնոյան

անդամներ _____ Ալեկսանդր Կանդանով

_____ Համլետ Մակարյան

_____ Դավիթ Շատվերյան

_____ Արթուր Եղիազարյան

քարտուղար _____ Վարդան Նավասարդյան